

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Շիրակի Պետական Համալսարան**

**ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ**

Շիրակի մարզի Բանդիվան գյուղի միջնակարգ դպրոց

**Թեմա՝ ՀՀ անտառային լանդշաֆտները և նրանց բնապահպանական  
հիմնախնդիրները**

Կատարող՝ Հռիփսիմե Սուքիասյան

**Աշխարհագրության առարկայի վերապատրաստման պատասխանատու՝**

աշխ. գիտ. թեկն. դոցենտ, Գ. Ավետիսյան

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....	3
Գլուխ 1. ՀՀ լեռնաանտառային լանդշաֆտների բնական պայմանները.....	5
1.1. Կլիմայական պայմանները.....	6
1.2. Հողային ծածկույթը.....	7
1.3. Ռելիեֆը և հողառաջացնող ապարները.....	10
1.4. Օրգանական աշխարհը.....	11
Գլուխ 2. ՀՀ լեռնաանտառային լանդշաֆտների բնապահպանական հիմնախնդիրները.....	13
2.1. Անտառային լանդշաֆտների օգտագործումը ռեկրեացիայի նպատակով.....	17
2.2. Անտառային լանդշաֆտների մարդածին փոփոխությունները վերջին 50 տարիների ընթացքում.....	20
Եզրակացություն.....	23
Օգտված գրականություն .....	24

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանն իր փոքր տարածքով հանդերձ, զարմանալի երկիր է: Այստեղ արտահայտված են կենդանական, բուսական աշխարհի, լանդշաֆտների բազմազանություն, ունի հարուստ երկրաբանական պատմություն: Հողերը, բուսական և կենդանական աշխարհը Հայկական լեռնաշխարհում վերընթաց ուղղությամբ փոփոխվում են, արդյունքում փոփոխվում են նաև ամբողջ բնական համալիրները՝ լանդշաֆտները: Հայաստանում ուղղաձիգ ուղղությամբ առաջնորդվում են հինգ գոտիներ՝ անապատակիսաանապատային, լեռնատափաստային, լեռնաանտառային, ալպյան, մերձալպյան և ձյունամերձ:

Անտառները համարվում են անգնահատելի հարստություն: Ցավոք Հայաստանը համարվում է սակավանտառ երկիր: Մարդու և ամբողջ մոլորակի համար անտառները շատ մեծ նշանակություն ունեն: Անտառը՝ բնության բազմաֆունկցիոնալ օբյեկտ է, հանդիսանալով էկոհամակարգ՝ այն կատարում է ջրապաշտպան, հողապաշտպան, կլիմայակարգավորիչ ֆունկցիա, հանդիսանում է կենդանական և բուսական աշխարհի ապրելավայր և աճելավայր: Անտառների պահպանումը, դրանց վերականգնումն ու բարելավումը մեծ ու կարևոր պետական, համամոլորակային հիմնախնդիր է, որի համար պայքարի պետք է գնան մոլորակի բոլոր մասերում ապրող ժողովուրդները:

Լանդշաֆտների էկոլոգիական խնդիրների արդիականության հարցը միշտ մնում է կարևոր հարցերից մեկը, այն պահից, երբ մարդը սկսեց շահագործել իր շրջապատն ու բնությունն անխնա կերպով, իր կենսական կարիքների բավարարման նպատակով: ՀՀ անտառային լանդշաֆտներն ունեն մեծ խախտվածություն, այդ հիմնախնդիրների բացահայտումը մնում է արդիական և կարևոր:

### ***Աշխատանքի նպատակն է՝***

- Ներկայացնել ՀՀ անտառային լանդշաֆտները, կարողանալ վեր հանել դրանց բնապահպանական հիմնախնդիրները և գտնել ուղիներ դրանց բարելավման համար:

### ***Աշխատանքի խնդիրները՝***

- Նկարագրել ՀՀ անտառային լանդշաֆտների ձևավորման պայմանները:

- Բացահայտել անտառային լանդշաֆտների էկոլոգիական խախտվածության աստիճանը:
- Վերլուծել վերջին 50 տարիների ընթացքում անտառային լանդշաֆտների մարդածին փոփոխությունները:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, 2 գլուխներից, ենթագլուխներից, եզրակացությունից, գրականության ցանկից:

## ԳԼՈՒԽ 1

### ՀՀ ԼԵՌՆԱՄՆՏԱՌԱՅԻՆ ԼԱՆԴՇԱՖՏՆԵՐԻ ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Բնական լանդշաֆտը դա աշխարհագրական համեմատաբար միասեռ տարածք է, որտեղ բնական միջավայրի հիմնական բաղադրիչները՝ ռելիեֆը, կլիման, ջրերը, հողերը, բուսական աշխարհը ու կենդանական աշխարհները, գտնվում են բարդ օրինաչափ փոխազդեցության մեջ, փոխապայմանավորված են և կազմում են մեկ միասնական երկրահամակարգ:

ՀՀ-ի լանդշաֆտային գոտիականության մեջ նկատելի են մի քանի օրինաչափություններ: Ներքին գոգավորություններում անտառային գոտին հիմնականում բացակայում է, իսկ Փոքր Կովկասի լեռնային համակարգերի արտաքին հողմակողմ լանջերին միևնույն լանդշաֆտների սահմանները ներքին գոգավորությունների համեմատ մի քանի հարյուր մետրով ավելի ցածր են:

Հողերը, բուսական և կենդանական աշխարհը Հայկական լեռնաշխարհում վերընթաց ուղղությամբ փոփոխվում են, արդյունքում փոփոխվում են նաև ամբողջ բնական համալիրները՝ **լանդշաֆտները**:

Հայաստանում ուղղաձիգ ուղղությամբ են առաջնորդվում *հինգ* գոտիներ՝ *անապատակիսաանապատային, լեռնատափաստային, լեռնաանտառային, ալպյան, մերձալպյան և ձյունամերձ*:

#### ***Անտառային լանդշաֆտներ:***

Հայաստանը համարվում է սակավանտառ երկիր: Անտառները և անտառային հողերը կազմում են երկրի տարածքի շուրջ 11.2 %-ը, նույնն է, թե ասել՝ 460 հազ. հա, որից 334.1 հազ. հա-ն անտառածածկ տարածքներ են: Այս թվի մեջ ներառված շուրջ 50 հազ. հեկտարն արհեստական անտառներն են: Հայաստանի անտառները լեռնային են, հանդիպում են հյուսիսային ու հարավային շրջաններում: Կենտրոնական շրջանը գրեթե անտառներից զուրկ է, կան միայն անտառների կղզյակներ կամ չորասեր նոսրանտառներ: Հայաստանում գերակշռում են լայնատերև անտառները:

Այսուհանդերձ, մեզ բաժին հասած սուղ քանակի անտառները հարուստ են ուրույն տեսակային կազմով: Սառցադաշտային ժամանակաշրջանում վերջնականապես ոչնչացել են անտառների խոնավասեր ու ջերմասեր տեսակները, և

մերձարևադարձային փարթամ անտառներն իրենց տեղը զիջել են լայնատերև անտառներին, որտեղ գերիշխում են հաճարենին, կաղնին և այլ տեսակներ: Հայաստանի հիմնական անտառկազմող տեսակներն են հաճարենին, կաղնին, բոխին և սոճին: Ունենք նաև բազմաթիվ հազվագյուտ տեսակներ, որոնք զբաղեցնում են սահմանափակ տարածքներ և համարվում են բուսաշխարհի հնագույն ներկայացուցիչները: Դրանք են կենին, սովորական բաղեղը, թփային հասմիկը, արևելյան սոսին, թաղարենի բոխատերերը, սովորական մտրակակոթը և այլն:

### 1.1. Կլիմայական պայմանները

Հայաստանի Հանրապետության կլիմայաստեղծ գործոնները բազմազան են, որոշիչ նշանակություն ունեն աշխարհագրական դիրքը, լեռնային համակարգերը արաբական անապատների, Սև և Կասպից ծովերի, ինչպես նաև Իրանական ու Փոքրասիական բարձրավանդակների հարևանությունը: Հայաստանի տարածքը գտնվում է մերձարևադարձային գոտու հս. լայնություններում և բնութագրվում է չոր ցամաքային կլիմայով, կլիմային հակադրություններով ու տարվա 4 եղանակների առկայությամբ: Տարածքին բնորոշ է արևային կլիման:

ՀՀ լեռնաանտառային լանդշաֆտային գոտու կլիման մեղմ է, տաք ամառով միջինը՝ 18-20° C, առավելագույնը 35° C, մեղմ ձյունատատ ձմեռներով միջին ջերմաստիճանը ջուրջ -4° նվազագույնը -30°: Տեղումների տարեկան քանակը 600-700մմ է, և տարվա ընթացքում բաշխվում է համեմատաբար հավասարաչափ, միայն ամռանը բույսերի վեգետացիան, լրացուցիչ որոշ խոնավության կարիք են զգում: Անատառային գոտում ջերմության և խոնավության հարաբերակցությունը ամենաբարենպաստ է հանապետության սահմաններում:

Ճառագայթային էներգիայի բարձր լարվածության շնորհիվ անտառային գոտու ճառագայթման տարեկան հաշվեկշիռը դրական է: Մակերևույթի ուժեղ տաքացմանը խանգարում է ամպամածությունը և ջերմության ծախսը՝ գոլորշիացման վրա:

Հատկանշական է, որ կլիմայի փոփոխությունը ազդում է անտառների վրա: Կլիմայի փոփոխության հետևանքով կարող է գրանցվել ծառատեսակների կազմի փոփոխություն, կենսաբազմազանության կորուստ, ավելի հաճախակի բնական աղետներ, իսկ բազմաթիվ տարածքներում չորադիմացկուն ծառատեսակների համար

ստեղծվում են ավելի բարենպաստ պայմաններ: Որոշ տարածքներում ջրհեղեղների և էրոզիայի ավելացման պատճառով անտառի կողմից էկոհամակարգային ծառայություններ տրամադրելու հնարավորությունը նվազում է (խմելու ջրի և ոչ բնափայտային արտադրանքի նվազում, բացասական ազդեցություն օդի մաքրման հնարավորության վրա): Այս ամենը հանգեցնում է բարձրորակ անտառների կրճատմանը և թփուտների ավելացմանը, ինչպես նաև անապատացմանը:

## 1.2. Հողային ծածկույթը

Անտառային հողերի վերին հումուսային հորիզոնը ծածկված է կիսափտած թաղիքային շերտով: Հումուսի պարունակությունը 4-6% է, առանձին դեպքերում՝ հասնում է մինչև 12%-ի:

Անտառային հողերն իրենց մարգագետնային և տափասատանացված հողատեսակների հետ միասին գրավում են շուրջ 632 հազ. հա տարածություն և ներկայացված են 3 գենետիկական տիպերով՝ դարչնագույն, գորշ և հումուսակարբոնատային:

*Դարչնագույն հողեր* - Անտառային դարչնագույն հողերը զարգանում են չափավոր տաք և չոր կայուն խոնավությամբ առանձնացվող ու չոր թփուտներով հարուստ բոխու, կաղնու անտառային ծածկոցի պայմաններում: Նման հողերը մեծ մասսիվներով հանդիպում են Փոքր Կովկասի հյուսիսային և հարավային կտրտված լեռների մինչև 1500մ բարձրության տերիտորիայում:

Հողերը ձևավորվել են մեզոզոյի կրաքարերի, մերգելների, պորֆիրիտների և տուֆաբեկչիանների հողմահարման նյութերի դելյուվիալ-կարբոնատային կամ կրազուրկ կավերի, կավավազների, իսկ առանձին դեպքերում նաև հիշյալ ապառների էլյուվիալ նստվածքների վրա:

Դարչնագույն հողերը բնութագրվում են հզոր պրոֆիլով, երբ նրանք ձևավորվել են փուխր ապարների վրա, վերին հորիզոնը դարչնագույն, փոխանցման հորիզոնի բաց-դարչագույն գունավորմամբ, խոր և ինտենսիվ կավայնացմամբ, վերին հորիզոնի զգալի հումուսացվածությամբ, որը թռիչքաձև նվազում է դեպի ստորին շերտերը: Այդ հողերն ունեն կլանման մեծ ծավալ հագեցված հողալկալի հիմքերով, չեզոք կամ թույլ

հիմնային ակտիվ ռեակցիա և լավ արտահայտված իյուվիալ-կարբոնատային հորիզոն: Յաճրադիր չոր տեղանքի պայմաններում զարգացող հողերի մայրատեսակներում հաճախ կուտակվում են գիպս և երբեմն նաև հեշտ լուծվող աղեր: Հողերի պրոֆիլում հանքային մասի ուժեղ ձևափոխումը, կավային միներալների կուտակումը նպաստել է նրանց բարձր խոնավությանը և միջին հորիզոնների ամրացմանը: Այդ հողերն իրենց բերրիության պայմաններով գրավում են շագանակագույն հողերի և սևահողերի միջին տեղը:

*Անտառային գորշ հողեր* – Դարչնագույն հողերից անմիջապես վերև 1300-1800մ բարձրության տերիտորիաներում, հատկապես հյուսիսային, հյուսիս-արևմտյան և հյուսիս-արևելյան կողմնադրության լանջերում զարգացող բոխու-հաճարենու տնկարկների տակ ձևավորվում են գորշ անտառային հողեր: Գորշ անտառային հողերը մեծ մասսիվներով հանդիպում են՝ Դեբեդ, Աղստև, Հախում, Տավուշ և Խնձորուտ գետերի ավազաններում:

Հողերը զարգանում են համեմատաբար տաք և խոնավ կլիմայի ազդեցության տակ, պրոֆիլի լվացող ջրային ռեժիմի պայմաններում, որը հանգեցնում է առաջնային միներալների եռանդուն հողմանհարմանը և հողերի ամբողջ շերտում կավային մասնիկների զգալի կուտակմանը: Ձևավորվում են ինչպես հողալկալի հիմքերով հարուստ նստվածքային ապառների՝ կրաքարերի, կրաքարային մերգելների, այնպես էլ հրաբխածին գոյացումների՝ տուֆաբեկչիաների և պրոֆիրիտների հողմահարման նյութերի վրա:

Գորշ անտառային հողատիպը բնորոշվում է գենետիկ հորիզոնների թույլ զատորոշմամբ, վերին հումուսակուտակման հորիզոնի մուգ, մոխրագույն փոխանցման՝ բաց դարչնագույն և մայրատեսակի բաց գորշ երնագով: Հումուսի քանակը վերին հորիզոնում տատանվում է 3-8%, որը դեպի ներքև խիստ կրճատվում է: Հումուսանյութերում նկատվում է հումինաթթուների և ֆուլվոթթուների միանման պարունակություն կամ մեկից փոքր հարաբերություն: Այդ հողերի համար բնորոշվում է օրգանական ածխածնի և ազոտի լայն հարաբերություն (10-13) փոխանակային թթվության միջին պարունակություն, կլանման միջին և հաճախ միջինից փոքր ծավալ, կլանման կոմպլեքսի թույլից մինչև ուժեղ չհագեցվածություն, թույլից մինչև ուժեղ թթվային ակտիվ ռեակցիա, հողային



զանգցվածի թույլ ազդեցատացվածությունն և կավավազային մեխանիկական կազմ: Հողի պրոֆիլում հեշտ լուծվող միացությունների տեղաշարժը, դարչնագույն հողերի համամետոթյամբ տեղի է ունենում ավելի ակնառու կերպով: Հողերի վերին ենթագոտու ավելի խոնավն համեմատաբար ավելի ցուրտ կլիմայի պայմաններում երբեմն նկատվում է նաև տղմային ֆրակցիաների տեղաշարժ մակերեսից դեպի խորքը, բայց առանց քայքայման:

Գորշ անտառային հողերի ներսում, նայած բնակլիմայական պայմանների և հողերի մորֆո-գենետիկական առանձնահատկությունների տարբերությանը, կարելի է անջատել մարգագետնացված, թույլ չհագեցած և ուժեղ չհագեցած ենթատիպեր: Հողերի սեռերի առանձնացումը կարելի է կատարել մակերեսային հորիզոնի հագեցվածության, տափաստանացվածության, պրոֆիլի խճացվածության և մերգելացվածության ցուցանիշների հիման վրա: Գորշ անտառային հողերը թեք լանջերի վրա տեղադրվածության, թույլ ստրուկտուրացվածության և կավայնացման պատճառով ավելի հաճախ են ենթարկվում հողատարման, ուստի նրանց պահպանելու և ռացիոնալ օգտագործելու համար առաջին հերթին պետք է այդ հողերի կիրառել հակաերոզիոն գործոն միջոցառումներ:

Հաշվի առնելով, որ Հայաստանի անտառները լեռնային անտառներ են, **գտնվում են 30 աստիճանից բարձր թեքությունների վրա**, ապա դրանք կատարում են հողապաշտպան ֆունկցիա: Այն տարածքներում, որտեղ համատարած հատումներ են արվում շատ կարճ ժամանակում անձրևների և ձնհալի արդյունքում լեռների լանջերից լվացվում է հողի բերրի՝ հումուսային շերտը և լցվում գետերը, որոնք հոսում են հարևան երկրներ և պարարտացնում են մեր հարևանների տարածքները: Հայաստանում առաջանում է հողի էրոզիա, սողանքներ և անապատացում: Հողի հումուսային շերտը դժվար վերականգնվող է կամ կարելի է ասել, որ չի վերականգնվում, քանի որ 10 սմ հումուսային շերտի վերականգնման համար անհրաժեշտ է 100 տարի: Պատահական չէ, որ Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է «Անապատացման դեմ պայքարի» կոնվենցիան, որի վերջին ազգային զեկույցում նշված է, որ Հայաստանի ողջ տարածքի 80% ենթակա է անապատացման: Դա էկոլոգիական և ազգային անվտանգության լուրջ խնդիր է: Փաստորեն, եթե չկա անտառ, չկա բերրի հող և հակառակը, եթե չկա հող չի կարող աճել անտառ:

Անտառները պաշտպանում են հողերի արգավանդ շերտերը հողմահարումից: Անտառների ծառերի արմատները նպաստում են, որպեսզի ջուրը ներթափանցի հողի ներքին շերտերը, որի արդյունքում փոխվում է հողի խոնավությունն ու կանխվում է հողի աղակալումը: Անտառները ամրացնում են նաև ստրուն ավազները: Հողերը ողողումից պաշտպանելու համար հատկապես կարևոր են մեծ թեքություններում գտնվող անտառները:

### 2.3. Ռելիեֆը և հողառաջացնող ապարները

Հայաստանի տարածքի հողային ծածկույթը համեմատաբար երիտասարդ է: Այստեղ հողագոյացումը հիմնականում սկսվել է պլիոցենում և շարունակվել չորրորդական ժամանակաշրջանում: Ռելիեֆի դրական տարրերում, որտեղ քայքայման և հողատարման պրոցեսներն ավելի ուժեղ են ընթանում, զարգացել են սակավագոր, քարքարոտ, հողմահարման ու հողագոյացման նյութերից աղքատ հողառաջացնող ապարներ, որոնց վրա ձևավորվել են թույլ զարգացած, կմախքային սակավագոր հողեր: Գոտիական հողատիպերից առավել զարգացում են ստացել հրաբխային բարձրավանդակի տարածքում կիսաանապատային գորշ, շագանակագույն, մարգագետնատափաստանային և լեռնամարգագետնային, իսկ Փոքր Կովկասի անտառային մարզում՝ անտառային դարչնագույն, ճմակարբոնատային, անտառային գորշ և մարգագետնատափաստանային հողատիպերը: Գոտիական հողատիպերից բացի, ռելիեֆի բացասական ձևերում, գերխոնավացման պայմանների և մարդու գործունեության հետևանքով զարգացել են գոտիական մարգագետնային գորշ ոռոգելի (կուլտուր-ոռոգելի), մարգագետնասևահողային, գետահովտադարավանդային, աղուտ-ալկալի, պալեոհիդրոմորֆ, ալկալի լճամերձ թույլ զարգացած հողեր: Մարդու տնտեսական գործունեության հետևանքով փոխվում է հողագոյացման ինտենսիվությունը, զարգանում են միջին և ցածր կարգի նոր հողառաջացումներ:

## 2.4. Օրգանական աշխարհը

Հայաստանի Հանրապետությունում կենդանական աշխարհը խիստ բազմազան է, կապված աշխարհագրական պայմանների բազմազանությամբ: Այդ բազմազանությունը պայմանավորված է կենդանաաշխարհագրական հոլարկտիկական մարզում երկրի գրաված դիրքի: Հայաստանը գտնվում է այդ մարզի պալեարկտիկ բաժնի այն հատվածում, որտեղ միմյանց հետ շփվում են երեք օկրուգ: Դրանք են՝ Իրանական, Փոքրասիական, Կովկասյան:

Անտառային գոտու անողնաշավորների ֆաունան բավականին հարուստ է: Հայաստանի Հանրապետությունում տարածված կարծրաթևավոր ֆաունայի ¼-ը անտառային է: Հյուսիսային անտառների ֆաունան նման է եվրոպական, կովկասյան, պալեոարկտիկական ֆաունաներին: Մնացորդային ստճուտներում շատ են թիթեռները, բզեզները: Հարավային անտառներում անողնաշավորների խմբում գերակշռում են հնագույն միջերկրածովյան և իրանակա-թուրանական ծագում ունեցող տարրերը:

Անտառներում սողուններից և երկկենցաղներից տարածված են՝ Շեկովնիկի ծառագորտը, իլիկաօձը, պղնձօձը, չորսշերտանի սահնօձը, ջրային և սովորական լորտուն: Անտառների մեկուսացված շրջաններում հանդիպում են՝ հայկական իժը, մարգագետնային մողեսը, կուսածին ժայռային մողեսները, անդրկովկասյան սահնօձը, Խոսրովի արգելոցում՝ անդրկովկասյան և սովորական գյուրզան: Անտառային գոտու թռչնաշխարհը հիմնականում ներկայացված է ճնճղուկանմանների կարգի ներկայացուցիչներով: Կաթնասուններից տարածված են՝ միջատակերներից՝ խլուրդը կրծողներից՝ կովկասյան սկյուռը, քնամկները, այծյամը, վարազը գիշատիչներից՝ անդրկովկասյան գորշ արջը, կովկասյան անտառային կատուն և այլ տեսակներ: Բացատներում հանդիպում է նաև նապաստակը, գորշուկը, աղվեսը, կովկասյան աքիսը:

Անտառներում շատ են թռչունները, նրանք բուն են դնում ծառերի ճյուղերի մեջ, աննկատելի անկյուններում, գետի վրա՝ մամուռի և թափված տերևների մեջ, խոտերում, հին ծառաբների խոռոչներում: Ծառերը ոչ միայն պաշտպանում են նրանց այլ նաև սնունդ են տալիս: Անտառային թռչուններից՝ երգող թռչունները՝ գորշ

մորեկանը, կարմրատուտը, սև արոսը, երգող արոսը, զանազան դեղնածղրիկներ: Բացատներում հանդիպում են անատառային արտույտներ, շատ կան սերինոսներ, խածկտիկներ և ճայեր: Բնորոշ են սև, կանաչ փայտփորիկները, որոնք սնվում են ծառերի կեղևի տակ բուն դրած միջատներով, ու նրանց թիթեռներով: Ծառերի վրա բնակավում են մոխրագույն բուն և բվեճը, որոնք գիշերային գիշատիչներ են: Ցերեկային փետրավոր գիշատիչերց են մորաճուռակը և մայրիավի բազեն:

Գիհու նոսրանտառների ֆաունայի խմբակցությունները բավականին առանձնահատուկ են: Այստեղ հանդիպում են թ՛ե կովկասյան, և թ՛ե փոքրասիական օկրուզների կենդանիներ: Քանի որ անտառային միջավայր լինելով հանդերձ, այդ նոսրանտառները չունեն չորային կլիմա, տրագանտային տափաստանային նոսր խոտածածկույթ և նման են կիսաանապատային, կիսաանապատա-տափաստանային լադաֆտին: Վայքի լեռնաշղթայի գիհուտներում կաթնասուններից հանդիպում են գայլ, աղվես, կզաքիս, փորսուղներ և աքիսներ: Կրծողներից տարածված են անտառային մկները և նապաստակը, ստորին ենթագոտում՝ լեռնային ճագարամկները:

Բնական բուսածածկույթի մեջ մարդու կատարած փոփոխությունները ազդել են նաև կենդանական տեսակների տարածման վրա: Ընդհանրապես մշակվող հանդակներում, դաշտերում ու այգիներում հանդիպում են, այնպիսի տեսակներ որոնք հատուկ են տվյալ օկրուզի ֆաունային, սակայն վերջինիս որոշ ներկայացուցիչներ, մասնավորապես խոշոր մարմինները իրենց կուսական միջավայրից դուրս են գալիս շատ հազվադեպ, իսկ տափաստանային գոտու այգիներում և այլ ծառաստաններում հաճախ հանդիպում են շատ տիպիկ անտառային տեսակներ:

## ԳԼՈՒԽ 2

### ՀՀ ԼԵՌՆԱՆՏԱՌԱՅԻՆ ԼԱՆԴՇԱՖՏՆԵՐԻ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀՀ լեռնանտառային լանդշաֆտները ունեն բնապահպանական բազում հիմնախնդիրներ: Դրանք կապված են թ՛ե բնական գործոններց, թ՛ե անթրոպոգեն գործոններից, սակայն մեր հանրապետության հիմնախնդիրները առավել կապված են մարդկային գործոնի հետ:

ՀՀ անտառային ոլորտի խնդիրները պայմանավորված են անտառամերձ համայնքներում չքավորության և փայտանյութի պահանջարկի բարձր մակարդակի, ապօրինի անտառահատումների շարունակման, չհամակարգված անտառօգտագործման, ինստիտուցիոնալ բարեփոխումների դանդաղ ընթացքի, ֆինանսական և մարդկային ռեսուրսների սակավության գերաբաժեցումով, հողմերով ու երաշտով և այլ պատճառներով, ինչը հանգեցնում է ոչ արդյունավետ կառավարմանը, անտառների որակական և քանակական հատկանիշների նվազեցմանը: Բացակայում են անհրաժեշտ կառուցվածքային միավորները, թույլ է համագործակցությունը անտառակառավարման և որոշումների կայացման մեջ համայնքների և տեղական բնակչության ներգրավման հարցերում:

Անտառների ոչ ճիշտ շահագործման հետևանքով արագանում ու խորանում են հողերի էրոզիան, անտառային գետերի ու ջրամբարների տղմակալումն ու «ծաղկումը», խախտվում անտառի ջրագրական ռեժիմը: Անտառային հողերում ջրի պակասի պատճառով տեղի են ունենում առավել խոնավասեր խոտան ծառատեսակների քանակական ու որակական փոփոխություններ: Սկսվում է անտառային հողերի կենսահամակեցությունների մարդահարույց հաջորդափոխություն (սուկցեսիա) և անտառների վերջնական դեգրադացիան՝ բնական անտառ → երկրորդային անտառ → դիֆուզ ցրված գաճաճ ծառատեսակներ → թփուտներ → անապատացում:

Կապված Հայաստանում անտառների հիմնախնդիրների հետ՝ առանձնացնենք հետևյալ խնդիրները անտառների կրճատման վերաբերյալ:

**ԽՆԴԻՐ №1-** Ներկայումս ՀՀ անտառների գեոհամակարգերի ճնշող մեծամասնությունը գտնվում է մարդածին ծանրաբեռնվածության տակ, երբ վատթարանում է անտառների էկոլոգիկական վիճակը: Անկանոն և անօրինական անտառահատումների պատճառով Հայաստանը կորցել է իր անտառների զգալի մասը: Մարդածին գործոնների բացասական հետևանքները առանձնապես ուժեղ է արտահայտվել հանրապետության կենտրոնական (Արարատյան գոգավորություն, Սևանա լճի ավազան) և հարավային (Վայոց Ձոր) շրջաններում:

**ԽՆԴԻՐ №2-** ՀՀ անտառների հիմնախնդիր է նաև անտառների աղտոտվածությունը, վերջին տարիներին անտառներում ռեկրեացիոն նպատակով գնացողների թիվը զգալիորեն մեծացել է, որի հետևանքով մեծացել է նաև անտառների աղտոտվածությունը, թողնելով անտառներում թափոններ, պլաստիկ շշեր, պլաստիկ տոպրակներ, միանգամյա օգտագործման սպասք, դրանցով իսկ աղտոտելով բնությունը, քանզի մնալով անտառներում դրանց քայքայվելու համար անհրաժեշտ է տասյակ տարիներ:

**ԽՆԴԻՐ №3-** Անկանոն անտառահատումները և անտառպաշտպանական միջոցառումների բացակայությունը անտառներում առաջացրել են կլիմայական պայմանների փոփոխություն, ինչպես նաև հրդեհավտանգության բարձրացմանը (բարձր ջերմաստիճան, առատ լույս, հատումների հետևանքով թափված ճյուղեր և տերևներ, պլաստիկ իրեր և այլն): Անտառային հրդեհները խիստ բացասական հետևանքներ են թողնում անտառների վրա:

Աղ. 1

	2013	2014	2015	2016	2017
<i>Հրդեհների քանակը, դեպք</i>	23	44	41	42	42
<i>Հրդեհված անտառածածկ տարածք, հա</i>	39,4	28,1	89,1	37,0	1111,8

**ԽՆԴԻՐ № 4-** Անտառներում լայն տարածում ունեն բազմաթիվ անտառային միջատներ, (մեր հանրապետությունում՝ ցեցեր, երկարակնճիթավորներ, սղոցողներ և այլն) որոնք վնասում են ծառերի ու թփերի բազամազան օրգանները, տերևները,

բները, ճյուղերը, արմատները և այլն: Նաև անտառները կարող են վարակվել սնկային ու այլ հիվանդություններով, զանգվածային վարակումից հաճախ ծառերը լրիվ չորանում են: Անտառների բնապահպանական, պաշտպանական գործում շատ կարոր է վնասատուների ու հիվանդությունների դեմ պայքարը:

Վնասատուների ու հիվանդությունների հիմնական վնասակար հետևանքներն են՝

1. Տնկարկի աճի մասնակի կորուստ՝ տերևները, փշերը ուտելու, բունը, արմատները վնասելու այլն:
2. Տնկարկի ավելի վաղ չորացումը, քան հատման սահմանված հասակն է:
3. Տնկակի ֆունկցիոնալ պրոցեսների խախտումը, որը հասցնում է նրան, որ որոշ կենսաբանական պրոցեսները զարգանում են ոչ ցանակալի ուղղությամբ:
4. Հատված տարածքի աճի դանդաղումը, և տեսակային կամզի փոփոխությունը,
5. Տնկարկի որակի վատացում:
6. Օգտակար փայտանյութի ելի իջեցում:
7. Կանաչ տնկարկների ծառատնկման ժամկետի կրճատում:
8. Հողերի արտադրողականության նվազումը, էրոզիայի զարգացումը և այլն:

**ԽՆԴԻՐ № 5-** Պատմական ողջ ժամանակահատվածում մարդու տնտեսական գործունեության հետևանքով Հայաստանի անտառածածկ տարածքների կրճատումից բացի, տեղի են ունեցել նաև ծառատեսակների կազմի և դրանց տարածքային հարաբերակցության զգալի փոփոխություններ և մեծ մասամբ տնտեսապես անցանկալի: Այս պրոցեսները նկատվել են՝ կովկասյան սոճու, հատապտղային կենու, արջատիլենու և այլ ծառատեսակների գերակշռությամբ ծառուտների զբաղեցրած տարածքի կրճատում, որի արդյունքում, այդ տեսակները հանդիպում են առանձին ոչ մեծ կղզյակների կամ հատուկենտ ծառերի ձևերով:

Անտառածածկ տարածությունների կրճատման հետևանքով առաջին հերթին պակասում են նվազ կենսունակ և քիչ տարածություն զբաղեցնող տեսակները, որոնք չեն դիմանում անտառի հատման հետևանքով առաջացած միկրոկլիմայական պայմանների և բիոտիկ գործոնների փոփոխություններին: Դրանք հիմնականում հնագույն ֆլորայի ներկայացուցիչներ են: Մշտադալար տեսակների՝ սովորական բաղեղի, կովկասյան լեռնավարդի, անդրկովկասյան և լերկատերև դափնյակների,

բոլոր ասեղնատերևավորերի՝ առանձնապես կենու, գիհիների՝ Հայաստանում եղած առանց այդ էլ սահմանափակ տարածություններն ավելի են կրճատվում: [6]

**ԽՆԴԻՐ № 6-** Անտառները բույսերի աճելավայր են, իսկ կենդանիների համար՝ ապրելավայր: Երբ հատվում է անտառը, ոչնչանում են նաև անտառում աճող բույսերը, իսկ կենդանիները միգրացիայի են ենթարկվում: Բնական և անթրոպոգեն գործոնների ազդեցության պատճառով Հայաստանի բուսական և կենդանական աշխարհի բազմազանությունը, առաջին հերթին՝ անտառային էկոհամակարգերը, կրել են ծանրագույն կորուստներ, և մեծ թվով տեսակների գոյությունը վտանգված է: Այդպիսով, կորցնում ենք հարուստ կենսաբազմազանություն, Կարմիր գրքում գրանցված բույսերի և կենդանիների հազվագյուտ և անհետացող տեսակներ:

Ներկայումս ՀՀ բնական անտառների մոտ 70%-ը կազմալուծված ու ծերացած է, համեմատաբար դժվարամատչելի հասուն և գերհասուն անտառներում կենտրոնացած են փայտանյութի զգալի պաշարներ, որոնք ռելիեֆի կտրտվածության և դժվար հասանելիության պատճառով զերծ են մնում անտառօգտագործման շատ տեսակներից:

Անտառների պահպանումը, դրանց վերականգնումն ու բարելավումը մեծ ու կարևոր պետական, համամոլորակային հիմնախնդիր է, որի համար պայքարի պետք է գնան մոլորակի բոլոր մասերում ապրող ժողովուրդները:

Հայաստանում անտառները պետական սեփականություն են, և պետությունն է ապահովում անտառների պահպանությունը, օգտագործումը, վերականգնումն ու նոր անտառային տարածքների ստեղծումը: Օրենքով անտառահատում թույլատրվում է միայն անտառվերականգնման, սանիտարական և խնամքի նպատակներով: Անտառների անկանոն հատումների պատճառով շատ կաթնասուններ (օրինակ՝ կզաքիսը, հնդկական մացառախոզը, գորշ արջը, մուֆլոնը, անտառային կատուն և այլ տեսակներ) լքել են իրենց բնական կենսավայրերը:

Վերջին հարյուրամյակում մարդու տնտեսական գործունեության հետևանքով Հայաստանի անտառների տարածքը կրճատվել է մոտ 2 անգամ, ընկել է անտառների արտադրողականությունը և պաշտպանական ունակությունը: Անտառածածկ տարածքի ընդարձակման, էրոզացված լեռնալանջերի անտառբարելավման նպատակով Հայաստանում կատարվում են արհեստական անտառտնկումներ: [14]



## 2.1 Անտառային լանդշաֆտների օգտագործումը ռեկրեացիայի նպատակով

Բնական լանդշաֆտների՝ մասնավորապես բուսածածկույթի ռեկրեացիոն գնահատումը ներկայումս ստանում է առավել մեծ կարևորություն, քանի որ Հայաստանում զբոսաշրջությունը հանդիսանում է գերակա ուղղություն: [9]

Մեծ է անտառների և դեկորատիվ տնկարկների ռեկրեացիոն նշանակությունը քաղաքներում: Կանաչ զանգվածները օդը մաքրում են փոշուց և զանազան ածխածին մանրէներից, թուլացնում աղմուկը և զգալիորեն պակասեցնում զանազան աղբյուրներից գոյացած ածխաթթու գազի քանակությունը: Տերևների մեղմ սվսվոցը, աղմուկի բացակայությունը, օդի հարաբերական բարձր խոնավությունը, մեղմ հովը, ամռան ամիսներին անտառը դարձնում են բնական ռեկրեացիոն ամենալավ միջավայրը: Այդ հանգամանքն առավել, քան կարևոր է մեր հանրապետության համար: Հայաստանի բնակչության ճնշող մեծամասնությունը ամռանը իր կարճատև հանգիստն անց է կացնում կանաչ գոտիներում՝ Արզնու անտառապուրակներում, Հրազդանի կիրճում, Դիլիջանի, Վանաձորի և Մարմարիկի անտառներում:

Հայաստանում կան անտառային ազգային պարկեր որոնք օգտագործվում են հանգստի, ռեկրեացիոն նպատակով: Ըստ գործառնական նշանակության, պահպանության և օգտագործման բնույթի՝ ազգային պարկում առանձնացվում են հատուկ գոտիներ. արգելոցային՝ պահպանության խիստ ռեժիմով, ռեկրեացիայի՝ հանգստի և զբոսաշրջության կազմակերպման, տնտեսական՝ ազգային պարկի ռեժիմին համապատասխան տնտեսական գործունեության ծավալման համար:

Դիլիջան ազգային պարկի 33 765 հա տարածքը Հայաստանի բնաշխարհի եզակի անկյուններից է, որն առանձնանում է հարուստ և յուրօրինակ կենսաբազմազանությամբ, մեզոֆիլ անտառային լանդշաֆտների, գիտական, ճանաչողական և տնտեսական բարձր արժեքներ ունեցող առանձին էկոհամակարգերի ու բնության հուշարձանների բնապահպանական, գիտաճանաչողական, առողջապահական և ռեկրեացիոն բարձր արժեքներով:

Անտառներն առաջին կարգի են: Ունեն հողապաշտպան, ջրակարգավորիչ, գիտական և տնտեսական նշանակություն: Ազգային պարկի բուսաշխարհն

ընդգրկում է 902 տեսակ ծաղկավոր բույսեր, որոնցից 40-ը՝ հազվագյուտ: 29 տեսակ գրանցված է Հայաստանի Կարմիր գրքում: Հիմնական ծառատեսակներն են՝ հաճարենի, կաղնի, բոխի, լորենի, հացենի, թեղի, սոճի և գիհի: Դիլիջանի արգելոցում են երրորդական դարաշրջանի մնացորդ՝ կարմրաձառի (մահիկի) պուրակները, որոնցից Աղնաբաթինը (Գետիկի ավազան) ամենախոշորն է Անդրկովկասում:

Հաղարծին վանական համալիրի տարածքը զգալիորեն մասնատված և գրեթե ամբողջովին անտառապատ մի տեղամաս է, որի կենտրոնով անցնում է Հաղարծնի գետակը: Որոշ հատվածներում, լանջերի թեքությունն անցնում է 30<sup>0</sup>-ը: Գեղեցիկ տեսարանները, նշանավոր պատմական հուշարձանները, գրեթե ամբողջ տարին ապահովում են զբոսաշրջիկների մեծ հոսք: Վերջին տարիներին արագորեն աճել է հատկապես էկոզբոսաշրջիկների թիվը, որոնք բացի վանական համալիր այցելելուց, մեծ տեղաշարժեր են կատարում անտառում: Հաղարծին տեղամասում գերակշռում են լայնատերև, մեզոֆիլ անտառները: Դրանք ունեն բավականին խայտաբղետ տեսակային կազմ, ինչն ավելի է բարձրացնում անտառի ռեկրեացիոն-զբոսաշրջային արժեքը: Մեծ տարածում ունեն խոշորատեղ կաղնին, վրացական կաղնին, արևելյան հաճարենին, սովորական բոխին: Հաղարծնի հանգուցային տեղամասում լավ արտահայտված է նաև անտառի շարահարկությունը:

Սևան ազգային պարկը պահպանվող տարածք է Հայաստանի Գեղարքունիքի մարզում: Պարկի ընդհանուր տարածքը՝ Սևանա լճի հայելու հետ միասին կազմում է 147.343 հա, իսկ առանց լճի հայելու՝ 22,585 հա: Պահպանական գոտու տարածքը կազմում է 342.920 հա: Պարկը գտնվում է ՀՀ Բնապահպանության նախարարության իրավասության ներքո:

Պարկի ռեկրեացիոն գոտիների ընդհանուր տարածքը կազմում է 4753 հա, որոնք առանձին հատվածներով տարածվում են լճի ափամերձ երկայնքով: Պարկի տարածքը ներառում է թվով 8 ռեկրեացիոն գոտիներ: Պարկի և դրա պահպանական գոտու ֆլորան ընդգրկում է անոթավոր բույսերի 1619 տեսակ:

Արևիք ազգային պարկը ստեղծվել է 2009 թվականին: Գտնվում է **Սյունիքի մարզում՝ Զանգեզուրի լեռնաշղթայի Մեղրի** լեռնաբազուկի հարավային լանջին, ինչպես նաև **Աստղաձոր** և Նյուվաղի գետերի ջրահավաք ավազանում: Մակերեսը

կազմում է 34 401.8 հեկտար: Պահպանության օբյեկտը Մեղրիի եզակի բուսական և կենդանական աշխարհն է: Ազգային պարկի տարածքում առկա են ուղղաձիգ բնական գոտիներ և լանդշֆտների տարբեր տեսակներ՝ ալպյան մարգագետիններ, լեռնային տափաստաններ, անտառային զանգվածներ, կիսաանապատներ:

Որպես անտառային ռեկրեացիոն ռեսուրս առանձնացնենք նաև՝ Գյուլագարակի տեղամասը, որի բուսածածկույթի դոմինանտ տեսակը կովակայան սոճին է: Մա Հայաստանում սոճու ամենամեծ արեալն է: Վերջինս բաղկացած է երկու տեղամասերից, որոնցից ամենամեծը զբաղեցնում է 75հա՝ տարածվելով հյուսիսարևմտյան դիրքադրության լանջերին, երկրորդ ավելի փոքր տեղամասը՝ 15հա, տարածվում է Տորմակ գետի հովտի հյուսիսարևելյան՝ հակադիր լանջի վրա: Ճիշտ կազմակերպված բնօգտագործման և համապատասխան ենթակառուցվածքների ստեղծման դեպքում սոճուտը կարող է դառնալ Հայաստանի ամենագրավիչ հանգստի գոտիներից մեկը:

Տեղամասի ռեկրեացիոն-զբոսաշրջային հնարավորությունները գնահատելիս, կարելի է ասել, որ դրանք բավականին բարձր են: Սոճուտնունի հստակ արտահայտված խմբային տեղաբաշխում, որի ծառուտի լրիվությունը հասնում է 0.3-0.4: Անտառը հիմակնում երկշարահարկ է և դյուրանցելի: Համեմատաբար փոքր է անտառի դիտողականությունը, որը հասնում է 15-20մ: [10]

Թեղուտի անտառը գտնվում է Հայաստանի Հանրապետության հյուսիսային մասում, Գուգարաց լեռների հյուսիսահայաց լանջերի 700-2200 մ բարձրությունների վրա: Տեղանքը մասնատված է բազմաթիվ ձորերով և ձորակներով:

Տարածքի գերակշռող բուսականությունը հաճարենու անտառներն են և նրա մնացորդները, որոնք սովորաբար զբաղեցնում են հյուսիսային, հյուսիսարևելյան և հյուսիսարևմտյան կողմնադրության լանջերը:

Թեղուտի անտառը Հայաստանում ամենալավ պահպանված անտառային տարածքներից է՝ հարուստ կենսաբազմազանությամբ, այդ թվում՝ շուրջ 200 բուսատեսակով, կաթնասունների 55, թռչունների 86, սողունների 10 և երկկենցաղների 4 տեսակներով: Այս բուսատեսակներից և կենդանատեսակներից շատերը հազվադեպ հանդիպող են և գտնվում են ոչնչացման եզրին, իսկ 6 բուսատեսակ և 26 կենդանատեսակ ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում:

## 2.2 Անտառային լանդշաֆտների մարդածին փոփոխությունները վերջին 50 տարվա ընթացքում

Մարդը մի կողմից, օգտվելով բնության բարիքներից, ձգտում է բարձրացնել իր կենսամակարդակը, մյուս կողմից, իր՝ բնության վրա բացասական ազդեցության արդյունքում, նա կորցնում է՝ իր համար կենսական անհրաժեշտ առողջ միջավայրը: Մարդը չի կարող իրեն լավ զգալ, շնչելով աղտոտված օդ, խմել աղտոտված ջուր, կորցնելով իր սննդի հիմնական աղբյուրը /հողը և անտառի բարիքները/, վերացնելով բնությունից գեղագիտական հաճույք և լիցքավորում ստանալու հնարավորությունը: Պատահական չէ, որ Հայաստանում շատ հիվանդություններ երիտասարդացել են, մի շարք հիվանդությունների տարածվածությամբ, ցավոք, գտնվում ենք առաջատար դիրքերում: Ներկայիս ցածր անտառապատվածությունը Հայաստանի տարածքում և դրա անհավասարաչափ բաշխվածությունը հետևանք է անթրոպոգեն ակտիվ ներգործության և կլիմայական գործոնների:

Հայաստանի անտառները միայն վերջին մոտ 100 տարվա ընթացքում 2 անգամ ենթարկվել են գերհատումների: Առաջին անգամ 1930-1950-ականներին, երբ արդյունաբերական նպատակներով տարեկան հատվում էր 450 հազ. խմ<sup>3</sup> բնափայտ: Այն դեպքում, երբ համաձայն թույլատրելի կարգի և նորմերի, պետք է կատարվեին եռափուլ աստիճանական և ընտրովի անտառհատումներ: Հատման առաջին փուլը գերհատումների հետևանքով, անտառների լրիվությունը առանձին դեպքերում իջեցվել է մինչև 0.2-0.4: Հենց այդ հատումների հետևանքով, ներկայումս Հայաստանի անտառները բնութագրվում են որպես տարահասակ և ցածրարտադրողական ծառուտներ:

Երկրորդ պիկը 1990-ականներին էր՝ կապված էներգետիկ ճգնաժամի և տնտեսական շրջափակման հետ: Այդ տարիներին նույնպես անվերահսկելի չափերով հատվեցին անտառային զանգվածներ, հիմնականում՝ վառելափայտի նպատակով: Անտառային ֆոնդի զգալի տարածքներ տուժել են զանգվածային անթույլատրելի ծառահատումներից, կրճատվել են անտառածածկ տարածքները, ավելացել են տարահասակ ցածրարժեք անտառները, խախտվել է անտառի ջրաբանական ռեժիմը, ակտիվացել են էրոզային երևույթները, սողանքներն ու հեղեղումները:

Այդ տարիներին (92-95թթ.) վնասվեց մոտ 27 հազ. հա անտառ կամ անտառածածկ տարածքի շուրջ 8%-ը: Ընդհանուր առմամբ, անտառների երկարատև չհամակարգված և անխնայ շահագործման, անասունների անարգել արածեցման, խոտհնձի և այլ տնտեսական գործունեության հետևանքով տեղի են ունեցել անտառային էկոհամակարգերի խորը կառուցվածքային փոփոխություններ, որի արդյունքում, ծառուտները կորցրել են իրենց բնական ինքնավերականգնման հատկությունները: Հանրապետության անտառային տարածքի կրճատումը զուգակցվել է տնտեսապես բարձրարժեք տեսակները ավելի ցածրարժեք տեսակների փոխարինումով՝ հաճարենու, կաղնու, սոճու, հացենու ծառուտներին փոխարինվել են ցածր արդյունավետության բոխուտներով, դաժուտներով, նոսրանտառներով ու ցաքուտներով և այլն: Առանձնապես մեծ չափերի հասնող կորուստներ կրեցին Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի մարզերի անտառային զանգվածները: Կտրուկ ավելացավ նաև վնասատու միջատների և հիվանդությունների զանգվածային տարածման օջախները:

1993-ին ՀՀ անտառային ֆոնդը 460 հազար հա էր, որից 334,1 հազար հա-ն անտառածածկ տարածքներ էին, մոտ 50 հազար հա-ն՝ արհեստական: 2008թ. ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ Հայաստանում տարեկան այրվում է մոտ 300-350 հազար խմ փայտ: ՀՀ Կառավարության 2005-ի որոշմամբ հաստատվել է Հանրապետության անտառի զարգացման ազգային ծրագիրը: 2004-2009-ին պետական բյուջեի և տարբեր ծրագրերի հաշվին 30,5 հազար հա տարածքում կատարվել են անտառվերականգնման աշխատանքներ:

Ճապոնիայի կառավարության «Պարենային արտադրության աճ» գործընկերային ֆոնդի հաշվին 2006-2009-ին տարբեր մարզերում հիմնվել է 1288 հա, իսկ Գերմանիայի շրջակա միջավայրի, բնապահպանության և միջուկային անվտանգության դաշնային նախարարության, Գերմանիայի զարգացման բանկի (Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի հետ) ֆինանսավորմամբ 2009-ին Լոռու մարզում ստեղծվել են 100 հա, ՄԱԿ-ի զարգացման ծրագրի շրջանակում՝ Գլոբալ էկոլոգիական ֆոնդի հատկացումներով՝ Սյունիքի մարզում՝ 10 հա անտառամշակույթներ: ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության

կազմակերպության աջակցությամբ 2009-ից Կոտայքի մարզում իրականացվում է անտառապատման և անտառվերականգնման ծրագիր:

Պաշտոնական տվյալների համաձայն՝ **ապօրինի ծառահատումների** քանակը 2017թ-ին 2016թ.-ի համեմատ աճել է 14 անգամ: Այս փաստը կարելի է բացատրել երկու տեսանկյունից, կամ իսկապես ավելացել են ապօրինի ծառահատումները, կամ պարզապես նախորդ տարիների համեմատ 2017թ-ին պատկան մարմիններն ավելի աչալուրջ էին ու շատ դեպքեր են արձանագրել:

Անտառների դեգրադացման գլխավոր պատճառներից մեկն էլ **հրդեհներն** են: Միայն 2017թ. ընթացքում հրդեհվել է 1112 հա անտառածածկ տարածք՝ այն դեպքում, երբ 2013-2016թթ. ընթացքում հրդեհված անտառածածկույթը կազմել է ընդամենը 194 հա: Հրդեհների աննախադեպ աճ է գրանցվել նաև 2019թ. առաջին կիսամյակում:

Եթե նկատի ունենանք, որ անտառների միջին տարիքը 90 տարի է, ապա Հայաստանի անտառային պաշարների վիճակը կարելի է գնահատել որպես օրհասական:

Նման տեմպերով առաջ շարժվելու դեպքում մենք կկորցնենք անտառի էկոլոգիական, տնտեսական ու սոցիալական գործոնների ազդեցությունը, քանի որ որքան քիչ անտառ, այնքան ավելի կեղտոտ օդ, ջուր, հողերի դեգրադացիա, համաճարակային բռնկումներ, կլիմայական հետագա փոփոխություններ, բերքի անկում, ինֆեկցիոն, սիրտ-անոթային, քաղցկեղային հիվանդություններ և այլն: [18]

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով աշխատանքը, կարող ենք ասել, որ.

1. Հայաստանը համարվում է սակավանտառ երկիր: Լեռնաանտառային լանդշաֆտները առավել տարածված են՝ Հայաստանի հյուսիս-արևելյան և հարավ-արևելյան հատվածներում:
2. Հայաստանում անտառների կրճատումը պայմանավորված է բնական և մարդածին գործոններով՝ սոցիալական պատճառների և փայտանյութի բարձր պահանջարկի հետևանքով կատարվող անօրինական անտառհատումներով, գերարածեցումով, հողմերով ու երաշտով, խոտհունձով, հրդեհներով պայմանավորված և այլ դրդապատճառներով:
3. Վերջին հարյուրամյակում մարդու տնտեսական գործունեության հետևանքով Հայաստանի անտառների տարածքը կրճատվել է մոտ 2 անգամ, ընկել է անտառների արտադրողականությունը և պաշտպանական ունակությունը:
4. Անտառների զբոսաշրջային-ռեկրացիոն գնահատումը խիստ կարևոր և արդիական է, որի իրականացման շնորհիվ առավել մեծ չափերով և արդյունավետ կարելի է օգտագործել Հայաստանի անտառների ռեկրեացիոն հնարավորությունները, որը նպաստում է ՀՀ զբոսաշրջային համալիր զարգացմանը:

## ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գաբրիելյան Ն.Կ., «Հայկական ՍՍՀ ֆիզիկական աշխարհագրություն», Երևան 1971թ., 220-239 էջ, 258-273 էջ:
2. Գաբրիելյան Ն. Կ., «Երկրագնդի լանդշաֆտային թաղանթը», Երևան 2000թ. 5-13 էջ, 168-171 էջ:
3. Գաբրիելյան Է., «Կանաչ Հայաստան» 2016թ.:
4. Գասպարյան Ա.Գ., «Բույսերի աշխարհագրություն», Երևան 1986թ. 403-410 էջ:
5. Հայրապետյան Է. Մ., Հարությունյան Լ. Վ., Հարությունյան Վ. Ս., Վարդանյան Ժ. Հ., «Շրջակա միջավայրի պահպանություն», Երևան 2005թ. 174-206 էջ:
6. Պողոսյան Դ.Ա., Խոյեցյան Ա.Վ., «Հայկական Լեռնաշխարհի լանդշաֆտները և ֆիզիկաաշխարհագրական շրջանները», Երևան 2008թ.:
7. ՀՀ անտառային օրենսգիրք <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=21354>
8. Հայաստանի Հանրապետության Բնապահպանության նախարարության կայք:  
<http://www.mnp.am/>
9. ՀՀ անտառի ազգային քաղաքականությունը եվ ռազմավարությունը:  
<http://www.irtem/views/act.aspx?aid=27497>
10. Անտառների պահպանությունը և էկոլոգիական անվտանգության խնդիրները:  
<https://ge.boell.org/en/2019/06/24/>
11. Հրդեհներն ու զանգվածային ծառահատումները վտանգում են Հայաստանի անտառները: <https://oc-media.org/>
12. Անտառներից վառելիքայտի հավաքման և բաշխման կառավարման ռազմավարություն:  
[https://drive.google.com/file/d/1A8jGFN6s\\_vsPBeymDtgX\\_9c6kcywMReJ/view](https://drive.google.com/file/d/1A8jGFN6s_vsPBeymDtgX_9c6kcywMReJ/view)
13. Բնական պաշարներ և շրջակա միջավայր:  
<https://www.armstat.am/file/doc/99511883.pdf>
14. Շրջանակային մակարդակում անտառային ոլորտի հնարավորությունների գնահատում: <https://www.enpifleg.org/site/assets/files.pdf>